



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

1.1 (31)

Естественные и физико-математические науки

(География и геология, биология, математика и механика, физика и
радиофизика)

Natural and Physical-Mathematical Sciences

(Geography and Geology, Biology, Mathematics and Mechanics, Physics and
Radiophysics)

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2020

ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1.1 (31)

Բնական և ֆիզիկամաթեմատիկական գիտություններ
(Աշխարհագրություն և երկրաբանություն, կենսաբանություն, մաթեմատիկա և
մեխանիկա, ֆիզիկա և ռադիոֆիզիկա)

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издается по решению Ученого совета ЕГУ
Published by the resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

ա.գ.դ., պրոֆ. Թ. Վարդանյան
ֆ.մ.գ.դ., պրոֆ. Ռ. Ալավերդյան
ֆ.բ.գ.դ., դոց. Ա. Բալաբեկյան
ֆ.մ.գ.դ., դոց. Ե. Մամասախլիսով
ֆ.մ.գ.դ., դոց. Տ. Հակոբյան
ա.գ.թ., դոց. Ս. Սուվարյան
ա.գ.թ., դոց. Գ. Ալեքսանյան
ե.գ.թ., դոց. Մ. Գրիգորյան
կ.գ.թ., դոց. Լ. Փանոսյան
տ.գ.թ., դոց. Հ. Հարոյան
ֆ.մ.գ.թ., դոց. Ս. Մխիթարյան
ք.գ.թ., դոց. Ի. Ալեքսանյան
ք.գ.թ., դոց. Ա. Մարտիրյան
ֆ.մ.գ.թ., ասիստ. Ա. Մանասելյան
ֆ.մ.գ.թ., ասիստ. Ա. Վարդանյան
ֆ.մ.գ.թ. Ս. Ալեքսանյան
ֆ.մ.գ.թ. Տ. Աբրահամյան

Редакционная коллегия:

д.г.н., проф. Т. Варданян
д.ф.м.н., проф. Р. Алавердян
д.ф.м.н., доц. А. Балабекян
д.ф.м.н., доц. Е. Мамасакхлисов
д.ф.м.н., доц. Т. Акобян
к.г.н., доц. С. Суварян
к.г.н., доц. Г. Алексанян
к.г.н., доц. М. Григорян
к.б.н., доц. О. Паносян
к.т.н., доц. О. Ароян
к.ф.м.н., доц. С. Мхитарян
к.х.н., доц. И. Алексанян
к.х.н., доц. А. Мартирян
к.ф.м.н., ассист. А. Манаселян
к.ф.м.н., ассист. А. Варданян
к.ф.м.н. М. Алексанян
к.ф.м.н. Т. Абрамян

Editorial Board

DSc, Prof. T. Vardanyan
DSc, Prof. R. Alaverdyan
DSc, Associate Prof. A. Balabekyan
DSc, Associate Prof. Y. Mamasakhlisov
DSc, Associate Prof. T. Hakobyan
PhD, Associate Prof. S. Suvaryan
PhD, Associate Prof. G. Aleksanyan
PhD, Associate Prof. M. Grigoryan
PhD, Associate Prof. L. Panosyan
PhD, Associate Prof. H. Haroyan
PhD, Associate Prof. S. Mkhitaryan
PhD, Associate Prof. I. Aleksanyan
PhD, Associate Prof. A. Martiryan
PhD, Assistant A. Manaselyan
PhD, Assistant A. Vardanyan
PhD M. Aleksanyan
PhD T. Abrahamyan

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55 55 70, publishing@ysu.am

Հրատարակչության նախապատրաստող ստորաբաժանում՝ ԵՊՀ ՈԻԳԸ

Դավայան Նազարեթ
ԵՊՀ, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ, բակալավր
Գիտականդեկավար՝ ա.գ.թ., դոց.Գ. Ալեքսանյան
Էլ. փոստ՝ davayannazaret@gmail.com

**ԿՐԹԱԿԱՆ ԶԱՐԳԱՑԱԾ ՀԱՄԱԿԱՐԳ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ ՓՈՐՁԻ ՆԵՐԴՐՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԶԱԳԱՑՈՂ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ**

Արդի աշխարհն արագ զարգացումների թատերաբեմ է, որտեղ յուրաքանչյուր պետություն փորձում է գոյատևել և դրա հետ մեկտեղ գրանցել զարգացման ցուցանիշներ: Այս իմաստով անհրաժեշտ է հասկանալ, թե որոնք են ամուր պետականություն և կայուն հասարակություն ունենալու գրավականները: Կրթությունը մեկն է այն ոլորտներից, որն ունի արագ զարգացման և փոփոխությունների ցուցանիշներ՝ կախված բազմաթիվ հանգամանքներից: Ունենալով Ճապոնիայի, Մինգապուրի և զարգացած մի շարք այլ երկրների վառ օրինակները, թե ինչպես կրթական ներդրումները հանգեցրին կտրուկ առաջընթացի՝ անհրաժեշտություն է առաջանում պարզել, թե *արդյո՞ք պետք է կիրառվի զարգացած կրթական համակարգ ունեցող երկրների կրթական ծառայությունների փորձը զարգացող երկրներում:*

Կրթությունը, լինելով պատմական հասկացություն, ցայսօր արդիական ու հասարակության համար անհրաժեշտ ոլորտ է: Կրթության միջոցով սերնդեսերունդ իրականացվում է գիտելիքների, հմտությունների ու փորձի փոխանցում՝ պայմաններ ստեղծելով աճի ու զարգացման ապահովման համար: Միևնույն ժամանակ հասարակական, քաղաքական, տնտեսական, սոցիալ-հոգեբանական, ժողովրդավարական և այլ գործընթացների արդյունքում կրթությունը, դրա որակն ու նշանակությունը փոփոխվում են տեղից տեղ:

«Կրթությունն ամենահզոր զենքն է, որը դու կարող ես օգտագործել աշխարհը փոխելու համար»: Հենց այսպես էր բնութագրում ու արժեվորում կրթությունը բոլոր ժամանանների ամենանշանավոր առաջնորդներից մեկը՝ Նելսոն Մանդելան: Մակայն հարց է ծագում՝ ի՞նչ է կրթությունը: Դասական սահմանման համաձայն կրթությունը համակարգային ուսուցման ստացման կամ տրամադրման գործընթացն է, որն իրականացվում է դպրոցներում, համալսարաններում և կրթական այլ հաստատություններում [1]: Բնարկե, այս սահմանումը մերօրյա պայմաններում բավական թերի է, քանի որ հիմա կրթությունն ունի շատ ավելի լայն ու ընդգրկուն մեկնաբանություն, քան երբևէ: Այս են վկայում կրթության վերաբերյալ գոյություն ունեցող բազմազան սահմանումները, կարծիքները, մոտեցումները, իսկ շատ հաճախ՝ նաև տարաձայնությունները:

Այսօր կրթությունն ընկալվում է որպես մարդու անձի ձևավորման ու կայացման գլխավոր հիմք: Սրա միջոցով մարդն սկսում է ճանաչել աշխարհն ու դրանում

գոյություն ունեցող օրինաչափությունները: Այս իմաստով կարելի է ասել, որ մարդը ծնված օրվանից անցնում է կրթական անվերջանալի գործընթացի միջով, որի արդյունքում ձևավորվում են նրա աշխարհընկալումը, աշխարհայացքը, գիտելիքները, մտածելակերպը և այլն: Թյուր կարծիք կա, թե կրթությունը դասապրոցեսն է և դրա արդյունքում ստացած որակավորումը: Այս մոտեցումը համապատասխանում է կրթության դասական սահմանմանը: Սակայն վերոնշյալը ընդամենը կրթության որոշակիացված գործառույթն է: Մինևույն ժամանակ պետք է նշել, որ կրթության հիմնական բաղադրիչներից է փոփոխությունը (առավելապես դրական), մինչդեռ շատ դեպքերում դասապրոցեսը կամ որակավորումն իրականացվում են առանց որևէ էական փոփոխության:

Ընդհանուր առմամբ, մարդու կրթական գործընթացն առաջին հերթին ընթանում է մշակութային ձևերի ու բարքերի յուրացմամբ, այլ կերպ ասած՝ սովորույթների ու ավանդույթների ճանաչողությամբ: Այս գործընթացն իրականացվում է մարդու ընկալման և միջավայրի անմիջական ազդեցության միջոցով: Հետագայում այս ընթացքն անցնում է ֆորմալացման դաշտ, որտեղ արդեն մարդը ստանում է այն, ինչի յուրացմանը նրան ուղղորդում են (ուսուցիչները, դասավանդողները և այլն): Այս փուլից հետո մարդն առավելապես հակվում է ինքնակրթության: Հենց այս մեկնաբանումն էլ թույլ է տալիս առաձնացնել կրթության ֆորմալ և ոչ ֆորմալ ձևերը:

Վերևում տրված է կրթության կարճ ու շատ համառոտ նկարագիրը: Սակայն կա ևս մեկ հարց. ի՞նչ է *կրթական համակարգը*: Առհասարակ համակարգը փոխկապակցված բաղադրիչների ամբողջությունն է, որի յուրաքանչյուր բաղադրիչ ազդում է մյուսների վրա՝ մինևույն ժամանակ կրելով մյուսների ազդեցությունը:

Դեռևս նախապատմական ժամանակշրջանում, երբ մարդկանց հիմնական զբաղմունքները որսորդությունն ու հավաքչությունն էին, մարդիկ իրենց գիտելիքներն ու հմտությունները փոխանցում էին սերնդից սերունդ: Սա, ըստ էության, կրթության նախնական, տձև տարբերակն էր [2]: Այնուհետև, երբ զարգացավ գյուղատնտեսությունը, առաջ եկան նոր գիտելիքների ձեռքբերման պահաջմունքներ, որոնք կապված էին հողի մշակման և յուրաքանչյուր ընտանի կենդանու խնամքի հետ [2]: Քաղաքակրթությունների ձևավորման հետ մեկտեղ, ինչպես նաև պետական համակարգերի ձևավորմամբ, առաջ եկան կրթության նկատմամբ ավելի խոր և բովանդակալից պահանջներ, քան նախորդներն էին: Երբ տեղի ունեցավ մարդկության գիտելիքների ու հմտությունների ընդլայնում և կուտակում, առաջ եկան ֆորմալ կրթության անդրանիկ հաստատությունները: Դպրոցների նախատիպեր ձևավորվեցին Հին Եգիպտոսում: Ուսուցանվողները սովորում էին գրել, կարդալ, հաշվել, նախատեսված էին սպորտի և նկարչության դասեր: Այս ժամանակներում նմանօրինակ ծառայություններից օգտվում էին միայն հարուստ տղա երեխաները [3]: Դպրոցներ, անգամ ակադեմիաներ ձևավորվեցին նաև Հին Հունաստանում: Այս եղանակով սկսվեց կրթության համակարգումը: Ձևավորված առանձին կրթական բաղադրիչներն

սկսեցին տարբեր ասպեկտներով միմյանց լրացնել՝ ստեղծելով մեկ ամբողջական համակարգ:

Այսօր կրթությունն իր ուրույն տեղն ունի յուրաքանչյուր երկրի սոցիալական, տնտեսական, քաղաքական կյանքում: Եվ բնավ կարևոր չէ, թե պետությունն իր զարգացման որ փուլում է. կրթությունը պահպանում է իր կարևորությունը՝ որոշակի տոկոսային տարբերություններով: Մեր օրերում, առավել քան երբևէ, մեծ ուշադրություն, միջոցներ, ռեսուրսներ, ջանքեր են ներդրվում կրթության ձևերի, կազմակերպման, արդյունավետության բարձրացման հարցերի ուսումնասիրման համար և սա բնավ պատահական չէ: Ունենալով բարդ ու համակարգային կառուցվածք՝ կրթությունը ենթադրում է պլանավորման, իրականացման, կառավարման և մի շարք այլ բարդություններ:

Անցում կատարելով կրթության էությունից հիմնական ձևերին, նշենք, որ ինչպես նրա ընկալումն է բավական բազմազանեցված, այնպես էլ տարատեսակները: Կրթությունը կարելի է դասակարգել ըստ հատկանիշների՝ կազմակերպման ձևի, ընդգրկվածության շրջանակների, տարիքային նախատեսվածության, մասնագիտացման և այլն: Ըստ կազմակերպման ձևի՝ կրթությունը լինում է ֆորմալ, ոչ ֆորմալ և ոչ պետական:

Բոլոր երկրները Միացիալ ազգերի կազմակերպության (ՄԱԿ) կողմից բաժանվում են երկու հիմնական խմբի. զարգացած և զարգացող երկրներ [4]: Երկրների դասակարգման հիմքում ընկած են տնտեսական այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ, ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով), արդյունաբերությունը, կենսամակարդակը և այլն: Զարգացած երկրները բնորոշվում են որպես «ինքնիշխան» երկրներ, որոնց տնտեսությունը գրանցել ու շարունակում է գրանցել բարձր ցուցանիշներ, նրանք, ի տարբերություն այլ երկրների, ունեն տեխնոլոգիական հզոր ենթակառուցվածքներ [5]: Արդյունաբերական և մարդկային ցածր զարգացվածություն ունեցող երկրներին անվանում են զարգացող երկրներ [5]: Զարգացած երկրներն ապրելու համար ապահովում են ազատ, առողջ և ապահով մթնոլորտ, որը զարգացող երկրներում այս կամ այն չափով բացակայում է: Զարգացած երկրներն այն երկրներն են, որոնք ունեն բարձր ցուցանիշներ տնտեսական, հատկապես՝ արդյունաբերության առումով: Սրանք հայտնի են նաև որպես առաջադեմ կամ «Առաջին աշխարհի երկրներ», քանի որ սրանք «ինքնուրույն» երկրներ են: Այն երկրները, որոնք անցնում են արդյունաբերական զարգացման նախնական մակարդակներով, մեկ շնչի հաշվով ունեն ցածր եկամուտ և հայտնի են որպես զարգացող երկրներ [5]: Այս երկրները համարվում են «երրորդ աշխարհի երկրներ»: Զարգացած երկրներ են Կանադան, Գերմանիան, Ավստրալիան, Շվեդիան, Նորվեգիան, Ֆրանսիան, Իտալիան և այլն: Զարգացող երկրներ են Չինաստանը, Թուրքիան, Քենիան, Պակիստանը, Թաիլանդը, Կոլումբիան, Հայաստանը և այլն:

Չարգացած կրթական համակարգ ունեցող երկիր լինելն ու զարգացած երկիր լինելը բնավ նույնը չեն: Համակարգերի ներդրումն առավել լավ պատկերացնելու համար դիտարկենք բարձրագույն ուսումնական հաստատությունների օրինակով:

Բարձրագույն ուսումնական հաստատությունները, ինչպես յուրաքանչյուր կրթական հաստատություն, ունեն իրենց նպատակների ուրույն շրջանակները, որոնք տարբեր բարձրագույն ուսումնական հաստատությունների ուղղվածության բնույթից կախված կարող են որոշակիորեն տարբերվել, սակայն, այնուամենայնիվ, ունեն ընդհանուր գծեր և համընկնումներ: Բարձրագույն ուսումնական հաստատությունները բնույթով տարբեր են: Դրանց սահմանումն ու իրավակազմակերպչական ձևերը, ինչպես նաև գործունեության ուղղություններն ու լիազորությունները սահմանավում են տվյալ երկրի օրենսդրական համապատասխան ակտերով: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը 1999 թվականի ապրիլի 14-ին ընդունել է «Կրթության մասին օրենքը», որտեղ սահմանվում են կրթության ոլորտին առաջադրված խնդիրները, կրթական հաստատությունների կազմակերպչա-իրավական ձևերը և այլն [6]: Ըստ այդ օրենքի՝ Հայաստանում գործող բարձրագույն ուսումնական հաստատություններն են համալսարանները, ինստիտուտները, ակադեմիաները և կոնսերվատորիաները [6]:

Համալսարան՝ բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի գործունեությունը նպատակաուղղված է բնագիտական, հասարակագիտական, գիտության և տեխնիկայի, մշակույթի տարբեր ուղղությունների բարձրագույն, հետբուհական և լրացուցիչ կրթության, հիմնարար գիտական հետազոտությունների և ուսումնառության կազմակերպմանը (հոդված 3, կետ 10):

Ինստիտուտ՝ բարձրագույն ուսումնական հաստատություն, որն իրականացնում է գիտության, տնտեսության և մշակույթի մի շարք ուղղությունների գծով մասնագիտական ու հետբուհական կրթական ծրագրեր և գիտական ուսումնասիրություններ (կետ 11):

Ակադեմիա (ուսումնական)՝ բարձրագույն ուսումնական հաստատություն, որի գործունեությունը նպատակաուղղված է որոշակի ոլորտում կրթության, գիտության, տեխնիկայի և մշակույթի զարգացմանը, իրականացնում է որոշակի ճյուղի (բնագավառի) բարձր որակավորման մասնագետների պատրաստումը և վերաորակավորումը, հետբուհական կրթական ծրագրերը (կետ 12):

Կոնսերվատորիա՝ բարձրագույն ուսումնական հաստատություն, որի գործունեությունը նպատակաուղղված է երաժշտության ոլորտում մասնագետների պատրաստմանը, որակավորման բարձրացմանը և հետբուհական կրթական ծրագրերի իրականացմանը (կետ 13):

Համալսարանների հիմնական նպատակն է մտավոր բոլոր դիսկուրսներում հիմնարար գիտելիքների որոնումը և դրանց սերնդեսերունդ փոխանցման ու ըմբռնման ապահովումը: Համալսարանները, նախատեսված լինելով միջնակարգ դպրոցական կրթություն ունեցող անձանց համար, այնուամենայնիվ, միտված են

համեմատաբար նեղ տարիքային խմբի ընդգրկմանը, այն է՝ 17–24 տարեկան: Համալսարանները ձգտում են զարգացնել ուսանողների ինտելեկտուալ կարողությունները, ստեղծագործ մտածելակերպը, քննադատական մտեցումները, շփվելու ունակությունները՝ վերջիններիս նախընտրած մասնագիտական ուղղությամբ նպաստելով նաև մտքի ազատությանն ու ըմբռնմանը [7]: Կարևորն այն է, որ համալսարաններն ապահովում են հիմնարար գիտելիքային բազա, որն էլ իր հերթին թույլ է տալիս ընտրած ոլորտում զբաղվել խնդիրների բացահայտմամբ ու լուծման հնարավոր ուղիների որոնմամբ: Այս իմաստով պարզ է դառնում, թե որքան օրգանական է կապը պետության և համալսարանական կրթության միջև: Շատ համալսարաններ, անկախ զարգացած կամ զարգացող երկրներում գտնվելու փաստից, բաժանում են իրենց կրթական ծառայությունների իրականացումը մի քանի փուլերի: Որպես կանոն այդ փուլերը երկուսն են՝ հիմնարար բնույթի հիմնական կրթություն և մասնագիտական–հետազոտական կրթություն: Սրա գլխավոր նպատակը հասարակականապես պատասխանատու անձանց և հետո միայն որակյալ մասնագետների պատրաստումն է: Նմանօրինակ համալսարաններում առաջին փուլի կազմակերպման ժամանակ ընտրված առարկաների ցանկը հիմնված է սոցիալական և քաղաքացիական դաշտի դրույթների յուրացման վրա: Այս եղանակով հնարավոր է հասկանալ հասարակության առջև ծառայած խնդիրները՝ մասնագիտական ոլորտի գիտելիքներն ու կարողություններն առավելագույնս ծառայեցնելով դրանց լուծմանը: Այս օրինակով է առաջնորդվում և գործում Նովոսիբիրսկի համալսարանը [7]:

Կան հատկանիշներ, չափանիշներ և որակական դրույթներ, որոնք առաջադրվում են համալսարանի շեմը հաղթահարած և այդ կրթական կառույցն ավարտած (որոշակի մասնագիտական որակավորում ստացած) անձանց: Այդ շրջանակները նույնպես ունեն առանձնահատուկ դրսևորումներ՝ կախված տարածաշրջանի կամ երկրի սոցիալ-մշակութային վիճակից: Այնուամենայնիվ, դրանք հանգում են աշխատասիրությանը, սովորելու ցանկությանը, ըմբռնողականությանը, կամքին, հեռատեսությանը, պատասխանատվությանը, մասնագիտական գրագիտությանը և այլն: Շատ կարևոր է, որ համալսարանն ավարտած յուրաքանչյուր ոք ճանաչի այն ուժը, որը ձեռք է բերել ստացած գիտելիքների և զարգացրած կարողությունների շնորհիվ: Սա է ինքնավստահության այն գրավականը, որով հասարակությունում կարելի է հասնել դրական փոփոխությունների:

Միևնույն ժամանակ, աշխարհում կան զարգացվածության բարձր մակարդակ ու տնտեսական աննախադեպ բարձր ցուցանիշներ ունեցող երկրներ, որոնց կրթական ծառայություններն ունեն որակի ամենաբարձր գնահատականները, բայց դա բնավ տեղի չի ունեցել արդյունաբերականացմանը զուգահեռ կամ գոնե դրանից հետո: Այստեղ արդեն գործել է մուլտիպլիկատորի (բազմարկչի) ազդեցությունը: Այսինքն՝ այս պետությունները, հասկանալով ու ընկալելով որակյալ կրթական ծառայությունների դերն ու նշանակությունը տնտեսության բնագավառում, խոշոր

ներդրումներն ուղղել են ոլորտ, իսկ կարճ ժամանակ անց որակյալ մասնագիտական կադրերն իրենց հերթին գիտելիքային բազան ու հմտությունները ներդրել են որոշակի ոլորտներում, ինչն էլ բերել է տնտեսական ընդհանուր վերելքի: Այսօրինակ երկներից են Ճապոնիան, Մինգապուրը և այլն:

Ծառայություններից շատերը, որոնք հանգում են գիտելիքների փոխանցմանը կամ որոշակի հմտությունների զարգացմանը, համալսարաններում ունեն «ուշացած» բնույթ: Այսինքն՝ տեղեկատվության ստեղծումը, շուկայական հարաբերությունները, գիտական հայտնագործությունները տեղի են ունենում համալսարանական պատերից դուրս: Դրանք անցնում են գտման փուլ, ձևավորվում և ամրապնդվում են որպես հավաստի և ստույգ տեղեկատվություն, և հետո միայն՝ մուտք գործում համալսարաններ: Այս իմաստով շատ կարևոր է անհատների ստեղծագործ մտածելակերպի և հեռատեսության զարգացումը:

Ջարգացած երկրներում համալսարանական ծառայությունների մատուցումը վաղուց վերածվել է բազմագործառնական գործունեության: Այլ կերպ ասած՝ համալսարանները ոչ միայն մասնագիտական կադրերով և պատասխանատու քաղաքացիներով ապահովելու խնդիրն են լուծում, այլև իրենց վրա են վերցրել սոցիալական, բարոյական, գիտական, մշակութային և մի շարք այլ բնույթի խնդիրների կարգավորման պատասխանատվությունը: Բազմաթիվ երկրներում համալսարանները նաև տնտեսական խոշոր միավորումներ են, որոնց տարեկան դրամական շրջանառությունը կարող է գերազանցել մի քանի միլիոն ամերիկյան դոլարը:

Այլ է պատկերը զարգացող երկրներում ու տարածաշրջաններում: Այստեղ բուհերի առաջարկած ծառայությունները մեծամասամբ ունեն որակական ցածր գնահատական. զարգացածների համեմատությամբ գրեթե հակառակ պատկերն է:

Վերևում ներկայացվածը վերաբերում է համալսարաններին ընդհանրապես:

Այժմ անդրառանանք դրանց մատուցած ծառայություններին:

Առաջարկում ենք համալսարանական ծառայությունները դասակարգել երկու հիմնական խմբի՝ հիմնական և օժանդակող: Համալսարանական հիմնական ծառայությունները հանգում են բոլոր այն ծառայություններին, որոնք այս կամ այն չափով կապված են բուն կրթական գործընթացի կազմակերպմանը (ընդունելության համակարգ, լսարանային ծառայություններ, դասավանդող որակյալ կադրեր, գրադարաններ և այլն), իսկ օժանդակ ծառայությունների շարքում կարող ենք առանձնացնել այն ծառայությունները, որոնք բարելավում են հիմնական ծառայությունների մատուցումը (մաքրության, անվտանգության, ժամանցային և այլ ծառայություններ):

Այսպիսով՝ զարգացած երկրներում վերոնշյալ հիմնական և օժանդակ ծառայությունների մատուցումն առավելագույնս համապատասխանում է որակական բարձր շեմին, սակայն արդարության համար պետք է նշել, որ սա միանշանակ չէ բոլոր զարգացած երկրների կամ համալսարանների համար:

Առավել մանրամասն քննարկենք, թե հիմնական ինչպիսի ծառայություններ են առաջարկում համալսարանները և դրանց կազմակերպման ինչպիսի ձևեր կան: Նախ և առաջ նշենք, որ մեկ ծառայության կամ միանման ծառայությունների կազմակերպման համար համալսարաններում առանձնացվում են հատուկ ստորաբաժանումներ, որոնք համալրվում են վարչական համապատասխան կադրերով: Առաջին հիմնական ծառայությունը վերաբերում է ընդունելության գործընթացի կազմակերպմանը: Չնայած յուրաքանչյուր պետություն օրենքի գործադրմամբ սահմանում է համալսարանների գործառույթային շրջանակները, այնուամենայնիվ, համալսարաններն ունեն սեփական կանոնադրությունները, որոնք համապատասխանեցվում են օրենքին, սակայն առավելապես ուղղված են ներքին կազմակերպչական հարցերին: Այսպիսով, կախված համալսարանի ներքին օրենսդրությունից, ընդունելության կազմակերպման ծառայությունները կարող են իրականացվել տարբեր կերպ: Դրանք կարող են լինել տարին մեկ կամ երկու անգամ (հեռակա կամ հեռահար ուսուցման պարագայում), վարչական կադրերը կարող են ձևավորվել կարճ ժամանակահատվածի համար՝ ներհամալսարանական շրջանակներից: Այս ծառայությունը ներառում է տվյալ համալսարանի առաջարկած բաժինների և մասնագիտացումների մասին հստակ տեղեկատվության ապահովումից մինչև դիմորդ-հայտատուների ընդունման գործընթացի կազմակերպում:

Հաջորդ հիմնական ծառայությունն ուսանողների դասապրոցեսի ժամանակացույցի կազմումն է: Սա իրականացվում է հիերարխիկ բնույթով՝ մեծամասամբ վերևից ներքև կտրվածքով: Այս ծառայությունն անմիջականորեն գուզակցվում է համապատասխան կադրերի, այսինքն՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ապահովման հետ:

Համալսարանական ծառայությունների շարքում պարտադիրների ցանկում է գտնվում գրադադարանային ծառայությունների մատուցումը: Իհարկե, ցանկացած համալսարան պարտավոր է ապահովել մասնագիտական (նաև ընդհանուր) զարգացման համար նախատեսված գրականություն: Սա հնարավորություն է տալիս լսարանային պայմաններում ստացած տեղեկատվության և գիտելիքների պաշարին ավելացնել մասնագիտական խոր գիտելիքներ: Գրադարանային ծառայությունները վերջին ժամանակներում կրել են էական ձևափոխումներ: Մասնավորապես՝ ավտոմատացման և էլեկտրոնային գրականության առկայությունը շատ համալսարաններում արդեն իրականություն է: Այս միջոցով յուրաքանչյուր ուսանող կարող է ձեռքի տակ ունենալ անհրաժեշտ գիրքը, ինչն, իհարկե, անհրաժեշտ ծառայություն է: Միննույն ժամանակ իրենց ուրույն տեղն ունեն տպագրված գրականություն ապահովող բաժինները: Գրադարանային ծառայություններին հարող է նաև ընթերցասրահների առկայությունը, որոնք կարող են համալրված լինել ժամանակակից տեխնիկայով, լուսավորման համապատասխան սարքերով, անհրաժեշտ կահույքով և այլն:

Համալսարանների պարտադիր ծառայություններից են ֆինանսական ծառայությունները: Սրանք ապահովում են բոլոր պայմանները՝ համալսարանի և ուսանողների միջև լուծելով ֆինանսական բնույթի հարցերը: Ինչպես նաև դրանք կարող են զուգահեռ իրականացնել այլ բնույթի ֆինանսական ծառայություններ:

Հիմնական ծառայությունների ցանկում են նաև որակի ապահովման կենտրոնները, որոնց նպատակը որակական առումով շարունակական առաջընթացն է հիմնական ծառայությունների մատուցման ժամանակ, ինչպես նաև մասնագիտական որակավորման համապատասխանելիության ապահովումը՝ ըստ ժամանակակից պահանջների:

Կարևոր և անհրաժեշտ ծառայություններ են մատուցում նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում գործող արտաքին միջազգային համագործակցության կամ կապերի բաժինները: Սրանք ապահովում են համալսարանների կապը տվյալ երկրում կամ երկրից դուրս գործող այլ համալսարանների, կրթական և գիտահետազոտական կենտրոնների, կրթության կազմակերպման այլ մարմինների հետ: Նպատակ ունեն իրականացնել երկկողմ համագործակցային կապերի հաստատում, համատեղ ծրագրերի իրականացում, փորձի փոխանակում և այլն: Նշանավոր համալսարանների համար այս բաժիններն ունեն աննախադեպ մեծ նշանակություն, քանի որ միջազգային ուսանողների ընդունելության և համակարգման ծառայություններն իրականացվում են հենց այս բաժինների միջոցով:

Որպես կանոն, համալսարաններին կից գործում են գիտահետազոտական կենտրոններ, լաբորատորիաներ, ինստիտուտներ և այլն: Սրանց գործունեության շրջանակները հանգում են տարաբնույթ ծառայությունների տրամադրմանը: Մասնավորապես՝ գիտահետազոտական աշխատանքների իրականացումը նպաստում է ոլորտային զարգացմանը և գիտահետազոտական բնույթի ծառայությունների տրամադրմանը: Այն ոլորտներում, որտեղ կատարվում են ուսումնասիրություններ կամ հետազոտություններ, կարող են գրանցվել լուրջ հաջողություններ, որոնք, իհարկե, հանգեցնում են դրական փոփոխությունների՝ ծառայելով երկրի ու հասարակության առաջընթացին: Միևնույն ժամանակ այս կենտրոնների ակտիվ գործադրմամբ հնարավորություն է ստեղծվում ուսանողությանը ներգրավել գիտության և պրակտիկ գործունեության մեջ: Սա հարթակ է, որտեղ ապագա մասնագետները կարող են ներդնել իրենց ստացած գիտելիքները՝ ստանալով անդրանիկ պտուղները:

Լրացուցիչ ծառայությունները, ինչպես արդեն նշել ենք, ունեն օժանդակող բնույթ և միտված են հիմնական ծառայությունների տրամադրման բարելավմանը: Մակայն շատ դեպքերում սրանք անմիջական կապի մեջ չեն հիմնական ծառայությունների հետ և ունեն առավել ինքնուրույն բնույթ: Այլ կերպ ասած՝ լրացուցիչ ծառայությունները ներքին և արտաքին առումով իրականացվող գործունեություններ են համալսարանական մակարդակում որոշակի ուղղություններով մատչելիության ապահովման համար:

Լրացուցիչ ծառայություններից են համալսարանականների (ուսանողներ, դասավանդողներ, վարչական կազմ և այլն) տեղավորման ծառայությունները: Համապատասխան շինությունները, որոնք պատկանում են համալսարաններին, առաջարկում են որոշակի քանակությամբ անձանց կեցության կազմակերպում: Այսօրինակ շինությունները կարող են տեղավորել նաև միջազգային հյուրերի, հրավիրված դասախոսների և այլն: Քանի որ համալսարաններն ունեն մագնիսի հատկություն, և ամենատարբեր վայրերից մարդիկ մեկնում են մասնագիտություն ձեռք բերելու, ապա այս բնույթի ծառայությունները միայն հեշտացնում են այդ գործընթացը:

Համալսարանների լրացուցիչ ծառայությունների ցանկում ուրույն տեղ ունեն մշակութային և ժամանցային բնույթի ծառայությունները: Սրանք առավելապես ուղղված են համալսարանականների մշակութային ակտիվության ապահովմանը, այն է՝ կինոդիտումներ, թատերական ներկայացումներ, համերգներ, քննարկումներ արվեստի կամ մշակույթի առանձին բաղադրիչների վերաբերյալ և այլն: Սրանք կարող են լինել առավել ակտիվ, այսինքն՝ կարող են գործել պարի, երգի, նկարչության, երաժշտական գործիքների, թատերական և այլ իմբակներ, որոնք առաջարկում են համապատասխան ծառայություններ, հետևաբար նաև՝ ժամանցի անցկացում հենց համալսարանում: Այս առումով կազմակերպվում են նաև զանազան մրցույթներ: Բաժնում առանձնահատուկ մեծ է սպորտի դերը: Համալսարաններին կից գործող սպորտային միավորումները հնարավորություն են տալիս կազմակերպել համալսարանականների առողջ ապրելակերպը՝ առաջարկելով ամենատարբեր բնույթի սպորտային ծառայություններ: Այս ծառայությունների կազմակերպումը ենթադրում է նաև համապատասխան մասնագետների, ինչպես նաև ժամանակակից սարքավորումների առկայություն: Ընդ որում, սպորտի բաժնում ևս կարող են գործել խմբեր:

Լրացուցիչ ծառայությունների կազմակերպումը կարող է իրականացվել ուսումնական և ոչ ուսումնական տարբեր միավորումների միջոցով, որոնք կարող են ձևավորվել համալսարանների ներսում կարճաժամկետ կամ երկարաժամկետ գործունեություն իրականացնելու նպատակով: Այսօրինակ գործունեության հիմնական մեխանիզմն ուսումնառության գործընթացի բարելավումն է, որը համատեղ քննարկումների, բացահայտումների, առաջարկների շնորհիվ հասնում է վերջնակետին:

Համալսարանների ոչ պարտադիր ծառայություններից են տարբեր միջոցառումների կազմակերպման ծառայությունները: Սրանց համար նույնպես կարող են լինել մշտական կամ ժամանակավոր կառույցներ՝ կախված այն բանից, թե ինչպիսին են տվյալ համալսարանի մարդկային և ֆինանսական ռեսուրսները: Համալսարաններին կից կամ հենց ներսում կարող են լինել սեմինարների, գիտաժողովների և հանդիպում-քննարկումների համար նախատեսված սրահներ՝ իրենց գոյության նպատակներից բխող անհրաժեշտ բոլոր միջոցների հագեցվածությամբ:

Կան հիմնական և լրացուցիչ բազմաթիվ ծառայություններ, որոնց մատուցումը համարվում է պարտադիր և ոչ պարտադիր՝ կախված համալսարանի ներքին և արտաքին գործոններից:

Վերոնշյալ բնութագրերն ու կարճ մեկնաբանությունները ներկայացրին համալսարաններին առաջադրվող հիմնական դրույթները, ինչպես նաև հիմնական ու լրացուցիչ ծառայությունները, որոնք առկա են կամ կարող են առկա լինել համալսարանական կրթությունը կազմակերպելիս:

Եզրակացություն: Հետազոտության արդյունքում պարզ դարձավ, թե որքան կարևոր են կրթական որակյալ ծառայություններն առողջ պետականության և կայուն զարգացող հասարակության ստեղծման գործում: Ուստի պետք է գիտակցել կրթության ժամանակակից մեթոդների ու պայմանների կիրառման անհրաժեշտությունը, քանի որ այդ կերպ կարելի է մատուցել կրթական լավագույն ծառայությունները՝ դրանց հիման վրա կառուցելով զարգացած և մրցունակ երկիր: Կարճ ասաց՝ անհրաժեշտ է, որ զարգացած երկրների կրթական ծառայությունների փորձը ներդրվի նաև զարգացող երկրներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

[1] www.oxforddictionaries.com(Accessed: 28.03.2019).

[2] www.psychologytoday.com (Accessed: 11.04.2019).

[3] www.ancientpages.com(Accessed: 14.04.2019).

[4] www.un.org(Accessed: 14.04.2019).

[5] www.keydifferences.com (Accessed: 19.04.2019).

[6] ՀՀ օրենքը Կրթության մասին, ընդունված՝ ԱԺ կողմից, 14 ապրիլի, 1999, հոդված 3, կետ 10-13, URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=68299> (հղումը կատարվել է՝ 12.05.2019):

[7] www.studfiles.net (Accessed: 21.04.2019).

Դավայան Նազարեթ

ԿՐԹԱԿԱՆ ԶԱՐԳԱՑԱԾ ՀԱՄԱԿԱՐԳ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ ՓՈՐՁԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԶԱԳԱՑՈՂ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Բանալիքառեր՝ կրթություն, կրթական համակարգ, զարգացած և զարգացող երկրներ, փորձի փոխանակում, կրթությունը որպես ծառայություն:

Հոդվածում քննարկվում են զարգացած և զարգացող երկրների կրթական համակարգերին առնչվող մի շարք կարևոր հարցեր: Առավել ակնառու դարձնելու համար օրինակներն ու փաստարկները բերվում են բարձրագույն ուսումնական հաստատությունների օրինակներով: Կրթությունը մեկնաբանվում է որպես ծառայություն, իսկ առաձևահատկությունները ներկայացվում են մեթոդական մի

շարք ձևերով: Վեր է հանվում զարգացած կրթական համակարգ ունեցող երկրների փորձի՝ զարգացող երկրներում ներդնելու անհրաժեշտությունը:

Даваян Назарет

НЕОБХОДИМОСТЬ ВНЕДРЕНИЯ ОПЫТА СТРАН С РАЗВИТЫМИ СИСТЕМАМИ ОБРАЗОВАНИЯ В РАЗВИВАЮЩИЕСЯ СТРАНЫ

Ключевые слова: образование, система образования, развитые и развивающиеся страны, обмен опытом, образование как услуга.

В статье рассматривается ряд важных вопросов, связанных с образовательными системами развитых и развивающихся стран. В качестве наглядного примера приводятся вузы. Образование интерпретируется как услуга, и ее особенности представляются рядом методологических подходов. Отмечена необходимость внедрения опыта стран с развитыми системами образования в развивающиеся страны.

Davayan Nazaret

THE NECESSITY OF INTRODUCING THE EXPERIENCE OF COUNTRIES WITH DEVELOPED EDUCATION SYSTEMS TO DEVELOPING COUNTRIES

Key words: education, education system, developed and developing countries, experience exchange, education as a service.

The article discusses several important issues related to the educational systems of developed and developing countries. Universities are cited as an illustrative example. Education is interpreted as a service, and its features are represented by a number of methodological approaches. The necessity of introducing the experience of countries with developed education systems into developing countries is noted.